

ՄԵԼԿ

Հարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Мелк“

Խմբագրատունը բաց է առաւօտեան, 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն շաբաթ:

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Զէյթունի ապստամբութիւնը: — Ներքին
տեսչութիւնը: Նամակ Ախալքալաքից: Ներքին
տեսչութիւնը: Արտաքին տեսչութիւնը:
Փոքր-Ասիա, Կ. Պոլսի «Stamboul» լրագրող հա-
յոց գաղթականութեան մասին: Թիւրքիա: —
«Մշակի» հեռագիրները: — Յայտարարութիւնները:
— Տեղեկացոյց: — Բանաւորական Մի ճանա-
պարհորդութիւն:

ԶԵՅԹՍԻՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

Արդէն երեք տարի է լռանում
որ Թիւրքիան անընդհատ անիշխա-
նութեան պատկեր է ներկայաց-
նում: Թիւրքաց պետութեան բո-
լոր նահանգներում ապստամբու-
թիւնները հետզհետէ յայտնվում
են: Միայն Հայերը հնազանդ էին
մնում Թիւրքաց տէրութեանը:
Նրանք կարծում էին որ համբե-
րութեամբ կրելով Բ. Նրան լու-
ծը, կը ստանան իրանց հաւա-
տարմութեան վարձատրութիւնը:

Բայց այդպէս չէր մտածում
ինքն Թիւրքաց տէրութիւնը. տես-
նելով հայերի հլու հնազանդու-
թիւնը Թիւրքիան սկսեց աւելի
էլ ճնշել հայերին, սկսեց աւելի
էլ մեծ հարկեր պահանջել հայ
ժողովուրդից, աւելի էլ հարստա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ԶԱՆԱՊԱՐՀՆՈՒԹԻՒՆ

Ազնիւ բարեկամը, յուլիսի 13-ին, վերջապէս
ոտքս դուրս դրի Նախիջևանէն, յանր է խոս-
տովանելը, բայց ինչ անես, որ ձայնարութիւն է:
— մեր մի ժամանակվայ «գեղեցիկ Նախիջևանը,
տուն հայոց և կայսրան» թողնում էի ետեւս
ինչպէս քար ու քանդ եղած աւերակ. որ փողո-
ցէն և չանցէնէ՛ր՝ ամեն տեղ հնութիւն, աւեր-
մունք և մահաման լուծիւն. տները կիսա-
քանդ, շատերը նրանցից կիսաշէն, ասես թէ
տէրը չիմտնեման կէսին հասել է և մեռել է,
իսկ ծառանքները աւարտած չեն, մարդիկ ցըն-
ցոտի չապկիներ հազած, համբալայ, չուարած,
աննպատակ առաջ գնացողը, ամենի երեսի
վրա խորտակ տպած: Կամ սաստիկ յոգնութիւն,
կամ յուսահատութիւն և կամ անտարբերութիւն:
Կայ մի աշխարհիս երեսին գործունէութիւն,
առաջադիմութիւն, կեանքի բարեօրոշմ, ասես
թէ այդ ամենը մեր նախիջևանցու համար մի
և նոյն է թէ լինէին կամ չը լինէին: Ինչպէս
որ մի մարդ իր ամենաթանկագին սիրելիսին
տանէ գերեզմանատուն և նրան յաւիտեան այն-
տեղ հանգստացնէ, ասես թէ այդպէս թողի ևս
Նախիջևանի մէջ իմ ամեն սիրելեաց և ինքն
ուրախ, զուարթ թողի և փախայ, մի գուցէ այդ
ընդհանուր մահն ինձ ևս հանդիպի: Այդ աստի-
ճան մեռելանման, անկենդան է մեր Նախիջե-

հարեւ հայոց թէ գիւղական և
թէ քաղաքային ազգաբնակու-
թիւնը:

Իերլենի կոնգրէսը գրեթէ նոյն
մարդասիրական աչքով նայեց
Թիւրքիայի ապստամբ քրիստոնեայ
ազգութիւնների վրա: Այն ազ-
գերը որոնք զենքը ձեռքին ապս-
տամբեցան տէրութեան դէմ,
եւրոպական դիպլոմատիան շնոր-
հեց նրանց այս կամ այն մարդ-
կային իրաւունքը, իսկ հայոց ազգը
ոչինչ չը ստացաւ, որովհետեւ հը-
նազադ է մնացել տէրութեանը:
Եթէ հայերը չապստամբեցան,
ասում էին եւրոպացի դիպլոմատ-
ները, նշանակում է թէ գոհ են
Թիւրքաց տէրութենից, ուրեմն
հայերին կարելի է անտես առնել,
նրանց հարկաւոր չէ շնորհել մարդ-
կային իրաւունքները: Ահա եւրո-
պական դիպլոմատիայի բարոյա-
կան փիլիսոփայութիւնը՝ ով որ չէ
ապստամբվում, նա գոյութեան
իրաւունք չունի, նոյն իսկ նրա
գոյութիւնն էլ կարելի է հեր-
քել....

Հայերը այդ շատ ուշ հասկա-
ցան և այժմ միայն, երբ պատե-

րազմը վերջացաւ ապստամբվում
են Թիւրքաց տէրութեան անտա-
նելի լծի դէմ, միայն այժմ այն
համոզմունքին հասնելով, որ հա-
ւատարմութիւնը դէպի այնպիսի
տէրութիւն ինչպէս մոնղոլական
Թիւրքիան է ոչ թէ միայն չէ
վարձատրվում, բայց և չէ գնա-
հատվում անգամ:

Չէյթունի ապստամբութիւնը
հետզհետէ սաստկանում է և ինչ-
պէս հաղորդում է գերմանական
«Polit. Corresp.» լրագիրը Չէյթուն-
ցի ապստամբների թիւը հասնում
է այժմ հարիւր հազարի: Նրանց
հետ միացել են և մահմետական
լեռնաբնակները:

Իերլենի կոնգրէսը հաստատեց
ամբողջ աշխարհի առջև որ բա-
րոյականութիւնը և քաղաքակա-
նութիւնը երկու ջուկ, միմեանցից
տարբեր հասկացողութիւններն են:
Անգլիան հերքում էր հայոց ազ-
գութեան գոյութիւնն անգամ,
իսկ այժմ երբ Թիւրքիայի հայերը
ապստամբվում են, լուսաւորված
Անգլիան ստիպված կը լինի ճա-
նաչել հայերի գոյութիւնը: Ինչ-
պէս երևում է տաւան և իններորդ

սօր թէ վաղը մեծամեծ հարստութեան տէր լի-
նելով, մի օր մեծամեծ բարօրութեան պատ-
ճառ պիտի լինեն իրենց հեռաւոր հայրենիքին,
եթէ միայն իրանք չը կորցնեն իրանց ազգու-
թիւնը....

Շախտի մօտերը ծանօթացայ երևելի թրի-
ֆոնով գործակաւորի հետ: Այս երիտասարդը
այնքան չափաւ բաներ չասաց մեր եղբայրակից-
ներու մասին. նրա ասածին նայելով, հայերը շատ
վատ գործ կը կատարեն իրենց հանքերու մէջ:
Հազիւ ոտքս Նախիջևանից դուրս դրի, ծա-
ռերի և բլուրների գեղեցիկ կանաչ գոյնը արդէն
սկսում է մարդու աչքը գուարթացնել. քանի
հեռանում են դէպի հիւսիս, այնքան ծառերը
խոշորանում են և անտառները խտանում են,
ուրեմն և ողբ մաքրվում է և առողջարար թը-
թուածինը շատանում է: Վեց տարվայ փորձս
յայտին ապացուցեց, որ մեր խեղճ թաւաճած
Նախիջևանը ևս կարող էր մի օր կանաչազարդ
հալաւ ստանալ, եթէ մենք մի փոքր աւելի աշ-
խատասէր լինէինք: Որ Նախիջևանի հողը և
ողը ընդունակ են գեղեցիկ և ամեն ազգի ծա-
ռեր բուսցնելու—արա ակնհերս ապացոյցն է մեր
նորաստեղծ ծառուղին: Միթէ մի քաղաքազ-
խին դժուար բան էր գոնէ քաղաքը ծառերով
զարդարել, եթէ անհնարին համարում է շատ ու-
րիշ օգտաւէտ հասարակական և հասարակաց
օգտի չէնքերով զարդարելը (օրինակ շատուրան,
զազի լուսաւորութիւն, քարուածք, մայրեր,
գիմնազիա, կանանց դպրոցներ, արուեստաւորաց
վարժարաններ, և այլն, և այլն, և այլն, որ մէկն
ասեմ): Չը գիտեմ որքին միտքը կը լինի, բայց
ևս տակաւին մոռացած չեմ, որ պ. Մինաս Պա-
լապանեանը շատ համողիչ խօսքերով հաստա-
տեց, ապացուցեց ոչ միայն օգտաւէտութիւնը
ծառերի, այլ և այն օգուտը, որ պիտի ստա-

ղարի քաղաքական բարոյականու-
թիւնը այս է՝ չես ապստամբվում
եմ, ուրեմն ես կամ:

Հայերը ուշ հասկացան այդ
ճշմարտութիւնը, բայց ասված է՝
լաւ է ուշ, քան թէ երբէք:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՍԱԿ ԱՍԼԻՔԱՆՔԻՑ

16 սեպտեմբեր

«Մշակ» 154 №-ում տպված իմ նամակով ես
խոստանում էի մեր ուսումնարանների հա-
մար հաւաքվող ժողովի մասին տեղեկութիւն
տալ ընթերցողներին: Քաղաքացիներից բաղ-
կացած ժողովը մի քանի օր հետզհետէ կայա-
ցաւ որի մէջ մեր պարոններից շատերը ցոյց
տուին նուրբ քաղաքագիտական տաղանդ և
այնպիսի կշռադատած համոզմունք, որով նրանք
հազար րուբլներ էին առաջարկում հաւատացած
լինելով, որ իրանց առաջադրած պայմանը ոչ
ոք չի յանձն առնի. օրինակ մինը խոստանում
էր 2,000 րուբլ տալ եթէ 20 մարդ 1,000-ական
րուբլ տալին յօգուտ ուսումնարանների, միւսը
3,000 էր տալին եթէ հինգ մարդ 1,000-ական
րուբլ տալին և այլն:

Մի պարոն ցանկանում էր որ այժմեան տե-
սուլը և ուսուցիչները փոխվեն, նմանապէս
մեղադրում էր թեմական վերատեսչին որպէս
թէ նա խոստացած է եղել բարեկարգել ու-
սումնարանները, բայց չէ կատարել, թէ և վերա-
տեսուլը դրա համար տարեկան երեք հազար
րուբլ ուսումնարանի համար ծախս էր պահան-
ջում և որը նրանք չեն հաւաքել:

Նուրբատունների համար բարեկարգել քահա-

նար Նախիջևանը նրանցից: Դիցե՛ք թէ Նախի-
ջևանը, գտնվելով Բոսնովի ճնշման տակ, երբեք
չէ կարող առուստուրի նկատմամբ, պաշարել
նրա հետ. գոնէ նա կը լինի գեղեցիկ բնակու-
թեան տեղ, և իր մաքուր օդուն կը դրաւէր բաղ-
մութիւնը իր մէջ, իր աւերակներու վերադա-
նութեան պատճառ կը լինէր, իր անբնակ տները
կը բնակվէին, մեր ամառի Նախիջևանը կը բաղ-
մամարդվէր, մէջը կենդանութիւն, շարժում,
կեանք կը մտնէր: — Միթէ, գնաց եկաւ, մեր
քաղաքազուրկը այնքան վարկ չունեցաւ ժողո-
ւրդի առջև, որ 20—25-ական ծառ տըն-
կել տալու գործութիւն, պատիւ և վարկ չունե-
ցաւ: Զարմանում եմ, և գրեթէ չեմ հաւատում.
միթէ ինքն, ինչպէս բոլշի, այդ բանի գոնէ ա-
ռողջարարութիւնը չէ հասկանում: — Թուղթ Վեր-
ջանալու վրա է, բայց իմ ձեռք հետ խօսելու ա-
խորժակը գեռ ևս նոր է բացվում, իմ բազմա-
կարօտ բարեկամներ, Շատ բարև իմ ամեն բա-
րեկամներուն յատուկ և յանուանէ: Մի մոռա-
նաք ինձ ինչպէս և ես ձեռք չեմ մոռանում այս
հաղարաւոր մղոն հեռաւորութենէն:

Ճանապարհորդութեան երրորդ օրը, այսինքն
յուլիսի 15-ին հասայ Մոսկով: Մոսկովը մեր
Նախիջևանցու համար այն աստիճան ծանօթ քա-
ղաք է, որ ես մինչև անգամ վրաս չեմ առնում
նկարագրել նրան: Եթէ Ռուսաստանի որ և է
քաղաքի համար կարելի է ասել որ «հսկայա-
քայլ առաջ է գնում», այդ միայն անսխալ կա-
րելի է ասել Մոսկովի վրա: Ով որ վրա վրա
չորս տարի չէ տեսել Մոսկովը, եթէ հինգերորդ
տարին գայ այնտեղ չի ճանաչի. թէ մէջը չին-
վածք, թէ ապրուստի ձեռք և թէ հազար ու մէկ
նորաձեւութիւնք, կեանքի յարմարութիւնք բոլո-
րովին փոխված կը տեսնէ: Մեր Նախիջևան-
ցին զարմանում է, տեսնելով Բոսնովի տարից

նայի կնքով վաւերացած մի մատնան առաջարկեց որի մէջ մի քանի պարոններ ստորագրեցին, իսկ հարուստ դասի մի քանի անձանց մէջ որովհետեւ անհամաձայնութիւն կար վերոյիշեալ միջման պատճառով, որոշեցին որ նրանցից իւրաքանչիւրը իր նուէրը քանակութիւնը կնքված ծրարներով յայտնէ:

Մատնանի մէջ ստորագրողներէն մի քանիք խոտանում էին իրանց նուէրները նոյն քանակութեամբ ամեն տարի չարունակել: այդ պարոնների նուիրած գումարը առ այժմ 140 բուբլէ է: յոյս ունենք որ մշտական նուիրատուների թիւը դեռ կաւելանայ:

Երկու օրից յետոյ երբ մատնանում ստորագրողներէն արդէն մօտ 500 բուբլէ հաւաքված էր, բայց արին աղաների խորհրդաւոր ծրարները, որոնց մէջ նրանք աշխատած էին ցոյց տալ ուսումնարանի ուսուցիչները բարձրագոյն դպրոցներում աւարտած ուսուցիչներով փոփոխելու անհրաժեշտութիւնը: դա առաջարկում էր մի պարոն հակառակ դէպքում այդ փոփոխելու ստանալու պայմանով, միւսը—որի վրա հասարակութիւնը գուցէ աւելի մեծ նուիրատուութեան յոյս էր դնում—նուիրում էր տասը բուբլէ «ախալքալակի ոմն» ստորագրութեամբ, չը գիտեմ ինչի համար այդ պարոնները դիմակի տակ են մտնում և սկզբից մինչև վերջը խորհրդաւոր դատողութիւններ են անում կուլիւսների յետեւից մի քանիսն իրաւ բարձրում են մեղադրանքներ, աւելի ոչինչ:

Մի լաւ խաղացած կոմէդիա չէ արդեօք նուիրատուութեան մէջ պայմաններ առաջարկել և զբաղնով փոխանակ հասարակաց օգտին նպաստելու միտքով:—վերոյիշեալ ժողովի մէջ վճարվեց ուսումնարան յաճախող աշակերտներին իրանց ծնողների կարողութեան համեմատ, հինգ դասակարգեր բաժանել, որոնցից առաջին դասակարգը պէտք է վճարէ տարեկան քսան բուբլէ, երկրորդը 12, երրորդը 6, չորրորդը 3, իսկ հինգերորդը որ բազմաթիւ է չբաւարժեցից ձրի է ուսանում: Մտաւորապէս այսպէս կարելի է հաշվել աշակերտների թիւը: Առաջին դասակարգին պատկանող 30 աշակերտներ, երկրորդին 40, երրորդին 30 և չորրորդին 20, և այդպիսով մենք կը ստանանք 1320 բուբլէ փող, որը միացնելով բարեբարութիւնների անդամավճար 180 բուբլէ հետ, մշտավճար պարոնների նուէր 140 բուբլէ և միանալով նուէրների 50 բուբլէ տոկոսի հետ, մի քանի օրերում ուսումնարանի աւելացած գումարը 1500 բուբլէից աւելի մի գումարի կը հասնի, որը հաւանքով է միջոցներ մեր ուսումնարանի առաջարկութեան:

Չենք կասկածում որ աշակերտների թոշակադրամի պատճառով պէտք է լինեն անձինք, որոնք իրանց որդիկրանց հայոց ուսումնարանից

տարի նորաչէն անելով զարգարվելը: Եթէ այդպէս է, ապա ուրեմն իրենց պիտի զարմանայ ուշք դնելով Մոսկովի մէջ կատարված կառուցմանց վրա... Եկաւեմի բան: Մոսկովի փողոցներում ամեն գալու ժամանակ միտքով կաւ Գ. Մ. Տրապիզոնցեանը, սակայն թէ ինչպէս Միտերը է, սիրական բարեկամներ, մեր վերջին օրերի վէճը նրա հետ նրա տան առջևի ոտք կոտորող մայրերու մասին... Ահա, Մոսկովի շքեղ, ուղիւ, հարթ և լայն մայրերն էին, որ ինձ յիշեցնում էին այդ պարոնին: Մի ժամանակ մոսկովցիին ևս մեզ պէս փառաւորված էր իր հիւրասիրութեամբ և կեղծ կուպաթիւններով, բայց տեսնելով որ ուսուցիչները—ու պարկեւէն ոչինչ չա՛հ չուներեալ, սկսաւ իր փողն ու գործունէութիւնը դարձնել առաւել օգտաւէտ բանի, որ է հասարակական շինութեանց և քաղաքի արտաքին բարեօրոգիծման: Շատ կարելի է որ այժմվայ մոսկովցիին իր հիւրի փողը չի լցնի իր գոլված կուպաթիւններով, բայց և նրա տան առջևից անցնողն չի լրբվի ցեխի մէջ և ոտքը չի կոտրի սուր սուր քարերի վրա: Այս ասելով, ես չեմ մեղադրում պ. Տրապիզոնցեանին, բայց կուզեի մեր լուսաւորեալ քաղաքային ուշադրութիւնը դարձնել այս ծանրակշիւ առարկայի վրա: Ի՞նչ ասել կուզէ, որ քաղաքի բարեօրոգիծումը, ի ներքուստ և յարտաքուստ, դրած է քաղաքացիների խղճմտանքի վրա: Մինչև այժմ մեր քաղաքագրութիւնները, թէև բարի մարդիկ էին, բայց ժամանակակից լուսաւորութեան գուրկ լինելով, գրեթէ անյարմար էին ժողովրդի բազմաթիւ կարիքը լըցնելու, բայց մենք, ընտրելով լուսաւորեալ քաղաքագրութիւն, նրա վրա բարոյական պարտք դրինք, եթէ ոչ միայն ամեն, գոնէ ամենահարկաւոր բողոքով կարիքը լցնելու: Եթէ պ.

հանելու ուսաց քաղաքային ուսումնարանը տան, ինչպէս մեր հոգաբարձուի մինը արդէն դիմեց այդ միջոցին:

Ինչ վերաբերում է այն պարոնին, որը իբրև ուսումնարանի առաջնութեան միակ միջոց, կամենում է փոխել ուսուցիչներին, և քանի որ ուսումնարանը հոգեւոր կառավարութեան ձեռքի տակ է գտնվում, նա ոչինչ յաջողութիւններ չէ տեսնում նրանում, և կը կամենար որ հոգեւոր իշխանութեան իրաւասութիւնը այդ ուսումնարանի վրա անուշով միայն լինէր, մենք դժուարանում ենք պատասխանել զրան, որովհետեւ անիրազօրեի ենք համարում: Մինչև որ եսակախութիւնը և անմիաբանութեան ոգին կը տիրեն մեր մէջ, մինչև անկողնապահ հոգով մենք չը հետազօտենք և չը համոզվենք մեր առաջարկած միջոցների իրականութեանը, ոչ մի քայլ առաջ չենք գնայ:

Խ. Մառանկոպեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք յօգուտ «Արարատեան ընկերութեան» «Մեղու Հայաստանի» խմբագրութեան միջոցով ԲՕԻՐՕՄԻՑ նուիրած 60 բուբլէ:

Մեզ դուռն են ԵՌԻՇՈՒՑ հետեւալը. «այստեղի փաճառական դասը շատ սիրում է լրագիր կարդալ: Երբ մէկը սկսում է կարդալ «Միջոց», քսան մարդ հաւաքվում է նրա շուրջը լսելու: Աւելի հաւանում են պատերազմական լուրեր կարդալ: Շուրջից վրդովում են, երբ տեղեկանում են, որ Թիւրքիայի հայերի հետ վատ են վարվել, նոքա կամենում են վրէժխնդիր լինել, բայց երբ այդ թշուառ հայերի համար կամենում են նուիրատուութիւն հաւաքել, նոքա խնայում են իրանց կօպէկները»:

Հոկտեմբերի 1-ից կը սկսվի Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԻՈՒՄ մի նոր ուսու լրագիր «Русская Правда» վերնագրով հրատարակութիւնը: Լրագրի խմբագիրը լինելու է Դ. Գիրս:

ԱՄՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՓՈՒՐ ԼՍԻՒԱ

Վիեննայի «Politische Correspondenz» լրագրին, սեպտեմբերի 19-ից, 4. Պօլից գրում են հետեւալը. «Միջոցի բարեկամները առաջագոյն ուրախացան նրա սքստրանքի հրամանը փոխելու պատճառով: Ամե-

Ա. մեր պէտքը կը լցնէ՝ մենք նրան կը գովենք, անունը կը փառաւորենք, թերեւ միւս քառամեակին նորէն քաղաքացիութիւն կընտրենք, բայց եթէ չանէ...»

Մոսկովի մէջ ձիւս-երկաթուղի տեսնելով, դարձեալ միտք բերի մեր Նախնիների ընկած վիճակը, ևս մի քանի ձեր խօսակցութիւններէն, իմ ազնիւ բարեկամներ: Միտքով է, մենք վերջին օրերը անդադրում (սքտուրի) խօսում էինք միայն այդ առարկայի վրա: Եթէ չեմ սխալվում, պ. Կարապետեանն էր, որ այն անգամ տաք տաք խօսեցաւ այդ մասին, թէ ևս սորանից 2 տարի առաջ գրած հաշիւներով և առաջարկութիւնն տեսել էր մեր քաղաքի իսկական բարեկամ Թ. Խրոմսեանի տանը: Ինչ և իցէ: Եթէ Նախնիները ուզում է իր թմրութենէն շուտ զարթել, անպատճառ պիտի էազօրծէ այդ նորաձեւութիւնը: Շատ կը սխալվենք, եթէ թոյլ տան մի քանի ինժեներներու անել այն, ինչ որ մենք ինքներս, ինչպէս առեւտրական և փողաւոր ժողովուրդ, պիտի էազօրծէինք: Հիմնած օրէն չի անցնի 3 տարի, որ այդ երկաթուղին 50% չա՛հ կը բերէ բաժանորդագրին և նորա տուած մայր գումարի արժէքը կը տասնապատուի: Իսկ քաղաքին տուած նւթական շահն և քաղաքացիներին տուած բարոյական շահն չափ և սահման չի ունենայ: Սխալ է, ով որ կարծում է թէ աղբը կը լուսաւորվի միայն դպրոցով, լրագրով, եկեղեցիով և թատրոնով—սոցա մէջ առաջին տեղը եթէ չը լինի հաղորդակցութեան ճանապարհը, այդ չորս բանը շատ ակար կը հանդիսանան ազգի աչքը բանալու: Չանանք, ուրեմն, բոլոր ուժերս թափենք, ձեռք ձեռք տանք և այդ ձիւսերկաթուղու իղէան մարմնաւորենք մեր իղական դպրոցէն առաջ: Բայց այդ բանը կարող է էացնել միայն մեր ժողովարանը: ու-

նամոտիկ ապագան կը ցոյց տայ որ շատ դժուար է նրան կրկին մեծ վիզը նշանաւելը: Ամենից առաջ հարկաւոր է աչքի առաջ ունենալ այն փաստը որ սուլթանը միայն ակամայ և պ. Կայարդի անդադար և համարեա յանգուզն թախանձանքներից ստիպված Միջոց-փաշայի վերադարձի համաձայնութիւնը տուեց: Անգլեացիք Միջոց-փաշին կամենում են Փղը-Ասիայի փոխարեւոյի նման մի բան շինել, որը, համարեա անասման իշխանութիւն ստանալով, կը գործադրէր թէ-ֆօրմները և, այսպէս ասած, կը թագաւորէր Անգլիայի կառավարչութեան և կօստրոյի տակ: Սուլթանը այդպիսի նախագծին մեծ եռանդով կը հակառակվի, որովհետեւ ձի կամենայ ստորանալ Անգլիայի վաւալ դառնալով Միջոց-փաշայի միջնորդութեամբ: Բանի որ Միջոց-փաշան պաշտօնական ոչինչ չի ստանայ, հետեւապէս, չի նշանակվի և Կրիտ կղզու նահանգապետ: Նրան, որպէս մասնաւոր մարդու, միայն թոյլ կը տրվի բնակվել այս կղզու վրա: Այստեղ իսկական նրան աւելի ծանր աքսորանք է սպասում, քան Անգլիայում, որովհետեւ նա ստիպված կը լինի զբիւլէ շատ արտօնութիւններից, որ նա վայելում էր Եւրօպայում: Միջոց-փաշան կարծես այս բանը ինքն ևս հասկացել էր, որովհետեւ, ինչպէս հաւատացնում են, Կիպրոս կղզու վրա բնակվելու թոյլտուութիւն էր խնդրում: Այսու ամենայն, այս թոյլտուութիւնը նրան չը տրվեցաւ և նրան հակապիտեցին, որ կատարեալ ներուժն կարող է յուսալ նա միայն այն դէպքում, եթէ կը հնազանդվի սուլթանի կամքին և գոնէ մի փոքր ժամանակով Կրիտ կղզին կուղևորվի: Այսու ամենայն, Միջոց-փաշան շուտով մի այնպիսի լուր կը ստանայ որը բոլորովին քարուքանդ կանէ նրա յոյսերը: Սուլթանը ինքնագիր նամակով հազիւ իրաւունք տուեց Մահմուդ-Նեհիմ-փաշային, բայրամի առաջին տօնին, (սեպտեմբերի 27-ին) Ստամբուլ վերադառնալ: Եթէ սուլթանի հայեացքների մէջ կրկին անսպասելի փոփոխութիւններ չը պատահեն, այն ժամանակ Ռուսաստանի յայտնի կուսակցի վերադարձը կարող է համարեա անկասկածելի համարվել և այն ժամանակ ուսաց քաղաքականութեան յաղթութիւնը կա-

րենի սխեմի արեք մէջէն ամեն թօմազներուն, բռնադիւրներուն, կանչվումաւ պօշ-գլուխներուն, որոնց միակ ցանկութիւնն է ժողովրդին կոյր պահելու, որ իրար կարող էր վրա միալարին թագաւորել ինչին:

Մի բան էլ նկատեցի Մոսկովի մէջ, որ ես ձեռք իմ սիրական բարեկամներ, երես առ երես տեսնելու ժամանակ կը պատմեմ, այժմ միայն այս կասեմ. «Մոսկով մի այնպիսի քաղաք է, որ ամեն անհատը մէջ ազգասիրութիւն կը ծնեցնէ ակամայ»: Խեղճ ունէք նը հասկացէք, թէ ինչ կուզեմ ասել:

Չեղբէն ամենքը, աղինւ բարեկամներ, նկատեմ կը լինէք (եթէ միայն ճանապարհորդել էք) որ քանի դէպի Մոսկով կը մտնիկնաւ, այնքան ժողովրդի բարքը կաւորի, կազմուեալ: Բայց երբ որ Մոսկովէն ելած, կը մօտիկնաս Պետերբուրգին, այդ սոսկութեան (որին մենք շատ ընտելացած ենք) ստուերը անգամ չի մնալ: Ես գրեթէ չը ճանաչեցի այն ուսերուն, որոց գիտէի որանից 10—12 տարի առաջ: Եթէ ասեմ թէ բոլորովին փոխվել ու վերածնել են ամենին սուտ ասած չեմ լինի: Նախ և առաջ իմացէք, որ Кузнецкий Мост-ը որ հաւասար էր Բօստօնի պարթիւնի գիշերվայ 2 ժամին, իր բարոյական աղտոտութեան մասին, այժմ մի համեստ, գործունէ, պատուաւոր փողոց է, ուր երիտասարդի փէչերը պատուաւոր չեն քաշում այլա-կերպ յաւերճաբարութեւք: Այժմ այնտեղ աշխատող վարժուհի, համեստ մայրը, աշակերտուհին կարող են անցնել գիշերվայ 10 ժամին և ոչ ոք նոցա ամօթխածութեան չի վիրաւորի: Բարեկամներ, գիտէք ինչ: Եթէ կայ աշխարհի երեսին մի անպարկեշտ, անբարոյական, Սոցոմ-Գոմարի նմանակ քաղաք—այդ մեր Բօստոնն է և նորա հռչակված պարտէզը, ուր մեր միաբնո ժողո-

տարեկապէս հաստատված կը լինի: Այսու ամենայն, այժմ իսկ տեսնելի է, որ պ. Կայարդ, որպէս Ասիական Թիւրքիայի վերանորոգիչ բոլորովին անգլեական դիպլոմատիայի այնպիսի հանդիսաւոր կերպով յայտնած վերանորոգութիւնների անցուցութեան մէջ, հայերը երգումից սկսում են Ռուսաստան անցնել, իսկ Ձէյթունի հայերը ապստամբվում են սուլթանի իշխանութեան դէմ: Ձէյթունը գտնվում է Ալէպպէսի Վիլայէթում, և 30,000 քաջամարտիկ հայ լեռնականներով է բնակեցրած, որոնց շատ անգամ չէրնօգորցիների հետ էին համեմատում: Դեռ 1839 թւին, Իբրայիմ-փաշան արշաւեց նրանց նուաճելու համար, բայց վերադարձաւ ջարդված զօրով, որի կարգերի մէջ մեծ մեծ երեւեցաւ: 1862 թւին, Բ. Դուռը այս լեռնաբաններից արտօնութիւններ խլելով ապստամբութիւն առաջացրեց, և Աղլե-փաշան, որը պէտք է այս ապստամբութիւնը ճշնէր, ամօթխել կերպով յաղթվեցաւ: Մի քանի շաբաթից յետոյ Բ. Դուռը մտադրվեց տանապատկել այս երկրից վերջնվող հարկերը: Հայերը վճեցին ամենայն ուժով բողոքել այդ միջոցի դէմ: Նոքա քաւութեանդ արին թիւրքաց մուգիր (քաղաքի կամ նահանգի ղեկաւոր) տունը և կանայք այս տան աւերակների վրա տխր և սխտոր ցանցեցին որ ամենամեծ արհամարհանքի արտայայտութիւն է համարվում: Յետոյ լեռնաբանները իջան դաշտավայրի վրա և կտորեցին մի քանի չէրկէսներին, որոնց Բ. Դուռը բնակեցրել էր այնտեղ անհնազանդ ժողովուրդին արարափի մէջ պահելու համար: Կենդանի մնացած չէրկէսները մեծ երկուղի մէջ էին ընկել: Նոքա խաղաղութիւն կապեցին յաղթողների հետ և դաշնագիր ստորագրեցին որ մակաբերվում էր հետեւեալ խօսքերով: «Մենք շնորհք վատ կը լինեմք, եթէ չը պահենք ձեզ տուած խօսքը: Յետոյ ապստամբները շուտով համաձայնութիւն կապեցին իրանց հարեան հաւատարմիցների հետ, որոնք բնակվում են Խաչինեան և Կօզանդազեան նահանգներում, և այժմ համարեա 100,000 մարդիկ արդէն ղեկուորված կանգնած են իրանց արտօնութիւնները և

վուրդը, լուսաւորութեան և կենցաղաքիտութեան փոխադն ծծում է վաղաշուտութեան, զեղխութեան և բարոյ ապականութեան ամենաշուրթ թոյնը: Կուղք հաւատացէք կուղք չէ: Ես ասելուս կասեմ...»

Առաջները Մոսկովի փողոցներում անցնելիս, ուսաց լեզուն կը լսէիր միայն գոնիկների, պանդուխտ ծառաների և տէրտէրների բերնէն: աղնուական, ղինուորական, լուսաւորեալք, առանց բացառութեան, միայն Փրանսերէն կը խօսէին: Այժմ Փրանսերէն խօսում են միայն վաճառականների թերեւս որդիք և աղջկաները և մի քանի ֆանֆարօն երիտասարդք և մազը կորած նիկիխոթկաներ: Ռուսերէն խօսելը այժմ նշան է բարեկրթութեան: Չէի կարող մեր պատուելի քաղաքացիներին մանաւանդ երիտասարդներին (բուլվարի մէջ չըլող) ասել որ ինչ ուսաց համար Փրանսերէնն էր, այն է այժմ մերոնց համար ուսերէնը: հասկանում են արդեօք նոքա, թէ իրենց ծիծաղելի, պախարակելի երեւում են օրինաւոր, բան հասկացող մարդոց աչքում...»

Սիրելի բարեկամներ, այստեղ ուզում էի մի լաւ երեմիական կարդալ մեր չէլիտ մարդոց զլխին, բայց տեսնում էք որ թուղթի վերջացաւ, ուրեմն խօսքը կորում եմ, շարունակութիւնը թողնելով միւս անգամին:

Եղբայրներ, գրկում եմ ամենիդ առանց բացառութեան: Յիշեցէք երբեմն ինձ, ինձ որ ձեզ միշտ յիշում եմ, նաև մարաքաղաքիս այսպիսի դուարձալի պարագայից մէջ: ամենը զեմ:

(Կը չարունակվի)

ինքնավարութիւնը պաշտպանելու համար։ Աւելի ևս ասեմք. նրանց և Աճմեդ-փաշայի առաջնորդութեան տակ գտնված մահմետական ապստամբների մէջ Կոզանում, դաշնակցութեան նման մէկ բան կայ։ Աճմեդ-փաշան թէպէտ մահմետական է, բայց ծնվեց հայ հօրից։ Զէյթունի ապստամբները խորհուրդ տուեցին նրան այն ժամանակ ապստամբութեանը քրիստոնէական բնաւորութիւն տալ նրա համար, որ նա աւելի լաւ տպաւորութիւն գործէ եւրօպայի վրա։ Աճմեդ-փաշան այս բանի հետ համաձայնվեց, և այժմ դաշնակցութիւնը համարեա կայացաւ։ Ապստամբները պատգամաւորներ ուղարկեցին Երզրում—առասաց գեներալ Լազարեվին խնդրելու որ օգնութիւն և մանաւանդ զէնքեր հասցնէ։ Մեծ վեղեր Սափֆէտ-փաշան, տեղեկանալով այս բոլոր անցքերի մասին, զանգատվեց հայոց ներսէս պատրիարքին, որը հոգոց հանելով պատասխանեց, որ ինքն Զէյթունի հայերի վրա ոչինչ ազդեցութիւն չունի։ Այս բոլոր մանաւորամտութիւնները հաղորդել է Զէյթունի հայոց արքեպիսկոպոսը, որը ժամանեց այստեղ մէկ աշխարհական պատգամաւորի հետ միասին և կիրակի օր, սեպտեմբերի 15-ին, քարոզ խօսեց Գալատայի հայոց մէկ եկեղեցում, որ և պարզ կերպով պատմեց բոլոր պատահածը։ Նրա քարոզը այնպիսի զօրեղ ապաւորութիւն գործեց, որ հարկւրաւոր հայ բնակիչները պատրաստվում են միանալ իրանց եղբայրների հետ Կոզանում։ Զէյթունի արքեպիսկոպոսը եկաւ պատգամաւորի հետ միասին նոյնպէս ներսէս պատրիարքի մօտ, որը ասաց նրան. «Ձեզ յայտնի է թէ ինչպիսի դերագրելու դրութեան մէջ եմ գտնվում ես։ Արեւ ինչ որ կամենում էք, բայց մի գաք այլ ևս ինչ մօտ խորհուրդներ հարցնելու։ Պատգամաւորները այցելեցին յետոյ առասաց գեներալին, որը նրանց շատ լաւ ընդունեց, Ֆրանսիական գեներալին, որը շատ սառը ընդունեց նրանց, և վերջապէս պ. Կայարդին, որին նրանք սաստիկ զանազանութիւն էին Անգլիայի անգործունէութեան դէմ։ Այլ ևս երբ—ասում էին նրանք—վերանորոգութիւններ կը գտնուին, որոնցով պէտք է բարեկաւել մեր վիճակը և ազատել մեզ փաշաների բռնակալութիւնից։ Պ. Կայարդ շփոթված էր և պատասխանում էր. «Նոյնը, ինչ որ արարեցին, սիրիական քրիստոնէականներին, Երզրումի հայերին և Եպիրոսի ու Թէսալիայի յոյներին, այսինքն՝ Վալաակեք, համբերութիւն ունեցէ՛ք»։ Բ. Գուլը, այնուամենայնիւ հարկաւոր համարեց միջոցների ձեռք խփել ապստամբութեան դէմ։ Ազանում և Մէրսինայում զօրքեր են ուղարկված։

Կ. ՊՕԼՍԻ «STAMBOUL» ԼՐԱԳԻՐԸ ՀԱՅՈՑ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Կ. Պօլսի «Stamboul» Ֆրանսիական լրագրում կարգում ենք հետեւեալ յօդուածը։

«Հայոց գաղթականութիւնը դէպի առասաց հին և նոր երկրները դրականապէս սկսված է և երեւում է որ այդ շարժումը պէտք է ընդունի մեծ ընդարձակութիւն։

«Մեզ հարկաւոր է մեծ ավերակութիւն այն ծանապարհի մէջ մնալու համար, որին մենք շատ ժամանակեց արդէն հետեւում ենք, աչքի առաջ ունեւորվ այն անշունք քաջալուրդութիւնը, որ մենք ստանում ենք թէ պետութեանը օգնուեալ են, կամ կարծում են օգնել։ Մենք այնու ամենայնիւ կը շարունակենք պնդել որ ամենամանաւոր միջոցները, որոնց պահանջում են հանգամանքները, բնորոշվեն, և եթէ մենք աւելի քաջալուրդութիւն չենք ունենայ քան թէ առաջ, մեզ կը մնայ

միայն միջոցաւոր մեր մենք մեր պարտաւորութիւնը կատարեցինք։ Այդ քիչ է, կան շատերը, մեզ համար դա դարձեալ մի բան է։

«Թիւրքիայում ընդունած սովորութիւնը ամեն հանգամանքներում կիսամիջոցներ գործ դնելու, այնքան արմատացած է, որ այդ սխառմայից չեն կարող ազատվել մինչև անգամ այն ժամանակ, երբ նրա գործադրութիւնը ներքին է։ Այն խառնակեալ դրութիւնը, որի մէջ պետութիւնը գտնվեցաւ երկու տարվայ ընթացքում, բազմաթիւ առիթներ տուեց նրա վարչութեանը ոչ մի գործ հաստատ կերպով չը վճռել Գորանից կարելի է դատել, թէ ինչ անհոգութեան մէջ էին թողված բոլոր խնդիրները, մինչև անգամ ամենամանաւորաբար, որոնք ըստ երևոյթի ոչինչ կապ չունէին թէ պատերազմի և թէ խաղաղութեան վերաբերեալ բանակցութիւններին հետ։ Անհոգութիւնը այնտեղ էր հասել, որ մինչև անգամ այնպիսի խնդիրներ կան էին մնացել, որոնց վճիռը կարող էր մեծ ներգործութիւն ունենալ նոյն իսկ դաշնադրութեան վրա։ Այդպիսով անուրանալի է, որ եթէ պատերազմի ընթացքում, կամ գոնէ այն օրից երբ թշնամութիւնները դադարեցին, տէրութիւնը եռանդոտ միջոցներ գործ դնէր պաշտպանել Ասիայի հայերին քուրդերի և չերիկների բռնութիւնների և հարստահարութիւնների դէմ, —գոհարութիւններից մին, որի դէմ պէտք է մարանչէին Սան-Ստէֆանօյի, բայց մանաւանդ Բերլինի բանակցութիւնների ժամանակ, անհետացած կը լինէր։

«Բայց ընդհակառակն բռնութիւնները աւելի սաստկացան։ Ներքին վարչութեան պաշտօնեաներ, որոնք հրաշքներ էին խոստացել հայերին, երբ որ հարկաւոր էր նրանցից նոր հարկեր խլելու և պատերազմական գործողութիւնների նպատակով հարկաւոր էր նրանց դաշտերի մշակութիւն թողնել տալու, —ոչինչ միջոցներ չեն գործ դրել հայերին կողմադրելու դէմ պաշտպանելու համար։ Մի քանի տեղերում վարչութիւնը կարծես լուռ համաձայնութիւն է տուել այդ վերջիններին։

«Մինչև որ գոհարի գտնաւորները համուում էին Պատրիարքարանը, որտեղից նրանք ինչպէս միշտ, առանց քաջալուրդութեան ներկայացվում էին Բ. Գրանը, Ռուսաստանը, որ ուշադրութեամբ հետեւում էր հայերի տանջանքներին և որ աւելի եռանդով գործելու յարմար րօպէին էր սպասում,—իր ազնուների միջնորդութեամբ ամենայնուայնու խոստումներ արաւ հայերին։

«Հայերը, որքան էլ յոգնած լինէին թիւրքաց վարչութեան կողմից կրած վատ վարմունքից, որ չէր դադարում և չէր երեւում որ պէտք է դադարէր, կրկին գրեցին և հեռագրեցին Կ. Պօլս, բայց դարձեալ այդ կողմից աւելի քաջալուրդութիւն չը ստացան քան թէ առաջ։ Այն ժամանակ սկսվեցաւ գաղթականութիւնը, որ հետզհետեւ աւելի ընդարձակութիւն ստացաւ։

«Մենք չենք կամենում պարտաւոր այդ հանգամանքում մեծ—վեղերի անձնական վարմունքը, մենք հաւատում ենք, որ նա ինքն ցանկանում է ցաւին դարման անել, բայց մենք պատճառներ ունենք մտածելու, որ նա իր գործունէութեան մէջ ոչ մի կողմից օգնութիւն չէ ստանում և մինչև անգամ արգելքների է հանդիպում։

«Բայց առժամանակ ցաւը սաստկանում է։ Ռուսների դատողութիւնները և նրանց մարդաբանութիւնները ուրեմն ճշմարտվում են իրողութիւնների զօրութեամբ։ Այժմ առասաց ազնուները կարող են ասել հայերեն՝ ո՛ր են ձեր պաշտօնեաներից խոստացած վերանորոգութիւնները, որ նոքա այն ժամանակ էին խոստանում ձեզ, երբ ձեզա-

նից առնում էին ձեր վերջին նիւթական միջոցները մեզ դէմ գործելու նպատակով։ Ո՛ր են այդ վերանորոգութիւնները, որ ձեր պատրիարքարանը յայտնեց ձեզ, ասելով թէ դուք կորած էք եթէ մեր օգնութեանը դիմէք։ Ո՛ր է Անգլիայի այն օգնութիւնը, որ այդքան բարձրաձայն խոստացան ձեզ և որից դուք հրաշքներ էիք սպասում։ Եթէ դուք դարձեալ յապաղէք գալ մեր կողմը, դուք կը հասնէք ձեր ցեղի կատարեալ ոչնչացնելուն և դուք պատասխանատու կը լինէք թէ Աստուծու և թէ պատմութեան առաջ ձեր կանանց և աղջիկների անպատուութեան և ձեր որդիների մահվան համար։

«Այդ տեսակ յորդորումները, այդ դժբաղդապէս հիմնաւոր դատողութիւնները իրանց ներգործութիւնն ունեցան և շատ տեղերում յաղթեցին հայերի ընդդիմադրական ոգին։ Գաղթականութիւնը սկսված է և շարունակվում է։ Դեռ ժամանակ կայ կանգնեցնել այդ ցաւալի շարժումը։ Թող շտապեն։

«Մենք չենք կամենում դիմել թիւրքաց միջնորդներին արդարադատութեան զբաղմունքին, որ ի հարկէ նրանք ունեն, բայց մենք հրաւիրում ենք նրանց մտածել այդ գաղթականութեան հետեւանքների մասին իրանց երկրի շահերի տեսակետից։

«Մենք չենք կարող հաւատալ որ Անգլիան անտարբեր կը մնար, եթէ նա հաստատապէս գիտենար որ այդ գաղթականութիւնը մեծ ընդարձակութիւն ունի։ Բայց մենք գիտենք որ այդ գաղթականութիւնը ծանր և ընդարձակ երևոյթ է և ուրեմն պէտք է ցաւենք որ Լօնդօնի կաբինէտը շատ անբաւարար տեղեկութիւններ ունի այդ մասին։»

ԹԻՒՐԻՔԻԱ

Թիւրքաց կառավարութիւնը, կարգում ենք լրագիրների մէջ, որքան էլ կամենար ժամանակ աշխատել, վերջապէս պէտք է մի պատասխան տար յունաց հարցի վերաբերութեամբ։ Թիւրքիայի համար ի հարկէ դժուար է զեջումն անել մի փոքր պետութեան, ինչպէս Յունաստանն է և այդ պատճառով քաղաքական շրջաններից դուրս կարծում են, որ Բ. Գուլը առանց պատերազմի չի տայ Յունաստանին ոչ մի կտոր հող։ Երբ Կ. Պօլսում լուր ստացվեցաւ, որ յունաց զօրքերը մօտենում են Եպիրոսին, թիւրքաց զօրքերը մօտեցան յունաց սահմաններին և Կ. Պօլսից անդադար օգնական զօրքեր են ուղարկվում։ Կառավարութիւնը մտադիր է ուղարկել Յունաստանի դէմ Ռուսաստանից վերադարձած զերիններին, որոնք շատ անգամ երել են կրակի մէջ, պատերազմել են Պլեկայի պաշարման ժամանակ։ Դոքա կարող են իրանց ցոյց տալ հէնց որ լաւ կը կազմակերպվեն։

Օրերումս փորձ եղաւ Արգու-Համիդ սուլթանին զրկել կիսնիցի։ Յանցաւորի անունն է Մահմեդ-Արգուլաւ։ Նա պատկանում է անբաւականների այն կուսակցութեանը, որ Թիւրքիայի դժբաղդութիւնների պատճառ համարում է սուլթանին։ Պիցիկային յայտնի էր դաւադրութիւնը և այն օրը, երբ Արգուլա ձեռնաձուլ եղաւ սուլթանի կիսնքին, նա շատ անձանց էր կալանաւորել։ Յանցաւորը ծածկված էր ամբարի մէջ և այնպիսի արագութեամբ անցաւ զինուորների միջից, որ մի րօպէում սուլթանի կաբինէտ էր։ Կարծում էին, որ նա կամենում է որ և է խնդրեք տալ սուլթանին և այն ժամանակ միայն նկատեցին, որ յանցաւորը զինաւորված է, երբ նրան հեռացրին սուլթանի կառքից։ Այդ օրը տօնում էին Հիւրադայի-չերիֆ, այսինքն երկրպագութիւն Մահմեդի վերաբերելին։ Սուլթանը ահագին սվեռայով ուղեւորվում էր Տօպկապու, երբ պա-

տահեց այդ անցքը։ Այդ տօնը մահմետականների ամենազխաւոր տօներից մէկն է։ Միւստիներ, մուշերներ, չէյս-ուլ-իսլամ և ուլեմներ սպասում էին սուլթանին հին սեւրալի դռների մօտ։ Սուլթանը այդ անցքից մինչև այն աստիճան յուզված էր, որ սովորութեան հակառակ ամբողջ օրը հին սեւրալի մէջ անցկացրեց։

Մի քանի օր արանից առաջ սուլթանը իրաւունք տուեց Միդհաթ-փաշային վերադառնալ հայրենիք, Մինչև նոր կարգաւորութիւնը Միդհաթ-փաշա պէտք է սպրեւ Միտիլեն կամ Կրիտ կղզու վրա, իսկ նրա բարեկամները բացարձակ հաւատացնում են, որ թիւրքաց չաջողված սահմանադրութեան հեղինակը շուտով իր ձեռքը կանի Թիւրքիայի կառավարական դեկը, որովհետեւ նա միակ մարդ է, որ կարող է փրկել սուլթանին և օսմանեան կայսերութիւնը։

Սուլթանի դիտաւորութիւնների այսպիսի փոփոխութիւնը հասկանալու համար պէտք է իմանալ, որ այժմ պալատը լն է Միդհաթի բարեկամներով, որոնք աշխատում էին ազդել նրա զբաղմունքների վրա։ Մի անգամ խօսակցութեան ժամանակ նոքա նկատեցին, որ Անգլիայում ստորագրութիւն է բացված նախկին մեծ վեղերին ապրելու միջոցներ տալու համար։ Սեւ կարծում էին, ասել է սուլթանը, որ նա հարուստ է։ «Նոյն հակառակը նա շատ աղքատ է»։ ասել են բարեկամները։ «Ուրեմն հեռագրեցէք հազար լիւրա տայ»։ Միդհաթը իբրեւ խելօք մարդ չընդունեց սուլթանի ընծան և նրան մի նամակ գրեց, որտեղ ասված էր, որ Միդհաթը յանցանք կը համարի ընդունել պետական գանձարանից որ և է օգնութիւն, քանի որ իր հայրենիքը դժուար դրութեան մէջ է։ Միդհաթը ի հարկէ չէր մոռացել շնորհակալութիւն յայտնել սուլթանին նրա մեծահոգութեան և առատաձեռնութեան համար։ Հազար այսպիսի խորամանկ միջոցներով Միդհաթի բարեկամները համոզեցին վերադարձնել Միդհաթին աքսորանքից։

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

10հոկտեմբերի, 26 սեպտեմբերի (8 հոկտեմբերի)։ «Էյտերի ընկերութիւնը» կասկած է յայտնում Ալեմաւիլի անգլիական զօրքերից գրաւելու մասին։

10հոկտեմբերի, 26 սեպտեմբերի (8 հոկտեմբերի)։ Ռուսաց զօրծակալը Բուլեղայում յայտնեց, որ այսօր Ռուսաստանը կազմակերպում է Բուլեղայի վարչութիւնը համեմատ Սան-Ստէֆանօի և ոչ Բերլինի դաշնագրի։

11հոկտեմբերի, 26 սեպտեմբերի (8 հոկտեմբերի)։ «Polit. Corresp.» լրագրին հաղորդում են Բելգրադից, որ Խրիստիչ նշանակվել է Սերբիայի մինիստր—ներկայացուցիչ Բ. Գրան մօտ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԻ, 27 սեպտեմբերի։ Պետական բանկի 50% տոմսերը առաջին շրջանի արժէ 96 ր. 75 Կ., երկրորդ 95 ր. 50 Կ., երրորդ 95 ր. 62 Կ., չորրորդ 95 ր. 62 Կ., ներքին 50% առաջին փոխառութեան արժէ 234 ր. 25 Կ., երկրորդ 230 ր. 50 Կ., արեւելեան 92 ր. 75 Կ., ոսկի 8 ր. 18 Կ.։ Ռուսաց 1 րուբլ Լօնդօնի վրա արժէ 23,94 պէնս, առասաց 100 րուբլ Գերմանիայի վրա արժէ 205 մարկ, Փարիզի վրա 250 ֆրանկ 50 սանտ։ Տրամադրութիւնը ամուր է։ Կովկասեան կերօսինը 240։

